ՏԱՍՆԵԻՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ա՛յ իմ փոքրիկ շամամ, քո ծոցուդ, ա՛մ, ե՞րբ տիրանամ.
Քո ծոցդ է ի ծով նըման, ծովըն դեղ կ'ասեն ի ջերման.
Փոքրիկ մրտեմնիկ լինամ ու մտնում ի ծոցդ ու լողամ,
Ծովերուդ ալ դուրս ելնում՝ ուներուդ շուքըն քընանամ:

Բ.

Ձան իր խորոտիկ սուրաթն եմ տեսել ու հայրան եղել.
Ձերեսս ի ծընծին միջին քանի՛ վար եմ թաւլեցուցեր.
Կ'ասեմ թէ՝ Նազ մի՛ աներ, չիկարնաս դու յիսնէն ուժեղ,
Տընւել եմ քեզ հանց շարպաթ, որ զպասրաթ ու խելքդ է տարել:

Գ.

Կ'ասեմ թէ՝ Սիրէ՛ դու զիս, մի՛ իմ սիրտըս ճընկընցընել.
Թէ չէ գնաս լալով ի շուրջ, չընկարնաս զիս հաշտեցընել:

Դ.

Քո սէրդ է արիւն եղել, հաւսար իմ երակս է մընտել.
Անձիկդ ալ ի ժուռ եկել 'ի հոգուս մէջն է դուրացել:
Ասի թէ քաշեմ դանակ, արիւնիս ասեմ՝ Արի՛, ե՛լ:
Մարդ իր դանակ ո՞նց քաշէ կամ հովուն ասէ՝ Արի՛, ե՛լ:

Ե.

Հաւսար ի ճօշք են առել 'ւ ի ոտանց կամին զիս ուտել,
Ալ ղալապ բան չեմ արել, իմ սրտովս ի եար եմ սիրել.
Թէ շատ թէ ի քիչ ջանամ, զինչ Հախն իմ ճակատս է գըրել.
Ձայս մէկս ալ կամիմ սիրել, թէ հաւսար ի ճօշք են առել:

Զ.

Չեմ ըզքեզ նենգով սիրել, չեմ ի քո հաղըդ վատ արել.
Արեւն որ ամէն ալամ է ցաթել, քեզ եմ կամեցել.
Գիտես թէ ծարաւած եմ ես կամ աղբիւրդ ի ջուրն եմ եկել.
Աս պահս ի գետէն կուգամ, լօք տե՛սընդ եմ կարօտել.
Իսկի կու կարնա՞ս գիտնալ թէ քանի՛ ինձ ես պիտացել.
Երեսըս գուն չեմ բերել 'ւ ամօթուտ աս հալն եմ ընկել:
Ղալտել եմ ու խօսք ասել նայ խայեալ է քեզ թըւեցեր,